

ԲՈՎՈՐ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՄԱՅՐԸ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Է ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

1-2 (1209-1210) 2019
Հրատարակության
55-րդ տարի

ԱՍՏՂԱԲՈՒՅԼ



Այն ո՞վ է ասում
Որ Արարատը ձերն է ու ձերը.
Անհեթեթ պատրա՛նք.
Քարտեզն է ձերը,
Քարտեզի վրա չափած-գծա՛ծը...
Մարմինն է ձերը,
Մերը՝ հոգին է...

Սիլվա Կապուտիկյան
լրացավ հայ քնարերգության
թագուհու 100-ամյակը

ՕՂ ԱԿԱՆՋՆԵՐԻՍ

Անդորրի մեջ
փիլիսոփայական
մեծ իմաստ կա:

Հակոբ
Մանանդյան

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ 2018 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐԿԱ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ



Հունվարի 29-ին, ՀԱԱՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում, որը վարում էր նախագահը՝ Արմեն Հարությունյանը, քննարկվեցին եւ հաստատվեցին հիմնադրամի 2018թ. գործունեության հաշվետվությունը, 2019թ. բյուջեի նախագիծը եւ 2019թ. կառուցվածքն ու հաստիքացուցակը:

Նախհաստատվեց 4 նորանդամի՝ բնապահպանության եւ գյուղատնտեսության փոխնախարարների եւ երկու ուսանողի անդամակցությունը խորհրդին:

2018թ. հաշվետվությունը ներկայացրեց համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը: Այն ներառում էր հաստատության գործունեության բոլոր ոլորտները:

Ակնհայտ է, որ համալսարանում մեկնարկած արմատական բարեփոխումների ժամանակաշրջանն առաջադրում է առարկայական մարտահրավերներ, որոնց հաղթահարմանը ղեկավարությունը հանձնառու է եւ պատրաստ: Ընթացիկ բարեփոխումները ներառում են կրթության որակի վերահսկողության նոր մոտեցումներն ու դրանք իրականացնող վերակազմավորված կամ նորաստեղծ բաժինների աշխատանքը, դասավանդման գործընթացի բարեփոխումները, էլեկտրոնային թեստավորման անցումը, կառուցվածքային բարեփոխումները, ուսումնասօժանդակ ենթակառուցվածքների գործունեության առողջացումը եւ ֆինանսավորման մեխանիզմների՝ սպասվող փոփոխությունը, գիտական ստորաբաժանումների եւ հետազոտական կենտրոնների օպտիմալացումը, միջազգային կառույցների աջակցությամբ ճարտարագիտական եւ քիմիական լաբորատորիաների վերազինման ուղղությամբ կատարվող աշխատանքները եւ այլն:

Դիմորդների, ուսուցիչների ուսանողների թվի նվազման, ենթակառուցվածքների անկատարության, դեռես լիովին չհաղթահարված կոռուպցիան եւ այլ մարտահրավերներ դիմակայելու՝ համալսարանի ղեկավարության վճռականությունը եւս մեկ անգամ հավաստելով, ռեկտոր Ուռուտյանը վերհանեց

անելիքները: Մասնավորապես՝ մասնագիտությունների եւ կրթական ծրագրերի խոշորացումը եւ դրանք դիմորդի համար գրավիչ դարձնելը, ուսումնական պլանների արդիականացումը, գիտական կենտրոնների հեռանկարային նախագծերի առետրայնացումը, համալսարանի միջազգայնացման գործընթացի խորացումը՝ ոչ միայն համալսարանը, այլեւ երկիրը լավագույնս ներկայացնելու միջոցով եւ այլն: Այս առումով նորաստեղծ. մարկետինգի եւ զարգացման բաժինը եւ որակի գնահատման եւ ապահովման կենտրոնը շատ կարեւոր առաքելություն են ստանձնել:

Պարոն Ուռուտյանի ներկայացմամբ համալսարանի մեկ տարվա ֆինանսական գործունեության մանրամասներին ծանոթանալով՝ հոգաբարձուների խորհրդի անդամները համոզվեցին, որ ֆինանսական գործունեության կարեւորագույն հայտանիշերն այսուհետ լինելու են թափանցիկությունը, իրատեսությունը: Իսկ 2019թ. բյուջեի նախագծի քննարկումից պարզ դարձավ, որ համալսարանի ղեկավարությունը, մասնավորապես՝ ընդլայնելով միջազգային դոնորների հետ գործակցության ծավալներն ու բարձրացնելով արդյունավետությունը՝ ի գործ է լուծելու առկա գիտակրթական խնդիրները:

Ուրախալի էր հոգաբարձուների խորհրդի ուսանող անդամների ակտիվությունը նիստի ժամանակ: Ռեկտորը նշեց ուսանողական խորհրդի աննախադեպ ակտիվությունը՝ ուսումնական տարվա սկզբից:

2018-ի հաշվետվության եւ 2019 թ. բյուջեի նախագծի միաձայն հաստատումից հետո էլ մտքերի շահագրգիռ փոխանակումը չդադարեց. հոգաբարձուների խորհրդի անդամները հանդես եկան հետաքրքիր, իրատեսական առաջարկներով, որոնք խորհրդի նախագահի եւ ռեկտորի կողմից ըստ արժանվույն գնահատվեցին:

2019 թվականի փետրվարի 6-ի նիստում ՀՀ կառավարությունը հաստատել է ՀԱԱՀ ռեկտորի ընտրության արդյունքները: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ մեծ հույսեր են կապում բուհի գիտակրթական ներուժի եւ առաքելության գերազանց իրականացման հետ:

ՄԱՐԴՆ ՈՏՔԵՐՈՎ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՃԻ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՄԵՋ

ՆՈՐԻՑ ԵՒ ՆՈՐԻՑ ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻԻ ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱշՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ԲԱՌԵՐ ՈՐՈՒՔ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՆ ՍՓՅՈՒԻՔԱՀԱՅԻՆ

«ճակատագրի բերումով» մեր լեզուն բաժանված է արեւելահայերենի եւ արեւմտահայերենի: Մեզանից յուրաքանչյուրի սրբազան պարոնքն է նվազագույնի հասցնել այս երկուսի միջեւ «ամկա տարբերությունը», գրնե օգտագործվող բառերի առումով: Չփորձենք եկու հատվածի կողմից օգտագործվող ինչ որ մի ընդիանուր բառը փոխարինել մյուս հատվածի համար անհասկանալի բառով:

Այս հարցում կիրառվող սխալ մարտավարությունը կարող է վատ հետևանքներ ունենալ: Այսպես. Լքել- նշանակում է հեռանալ, բայց սրտնեղած, նեղացած: Լավ հիշում եմ. սրանից մի քանի տարի առաջ հեռուտատեսության հաղորդավարուհին հաղորդեց. «Այսօր ժամը 16-ին ՌԴ կառավարական պատվիրակությունը լքեց Հայաստանը»: Արեւմտահայը լսելով այս հաղորդումը իսկույն կմտածի. «այդ ի՞նչ է պատահել, որ ՌԴ կառավարական պատվիրակությունը սրտնեղած, նեղացած մեկնել է Հայաստանից»: Իմ խորհուրդն է. որեւէ նոր բառ օգտագործելուց առաջ ծանոթանալ այդ բառի իմաստային երանգների հետ: Փողոցային (առեւտուր, երթեւեկություն): Փողոցային է անվանվում անկիրթ, անդաստիարակ, անկարգ մարդու արարքը: Այս նկատառումով պետք է ասել «փողոցում իրականացված (կամ բացօթյա) առեւտուր», «երթեւեկությունը փողոցում եւ այլն»: Ոչ, թե «փակ», այլ «ծածկած շուկա»:

Նորաթուխ (նաև նորելուկ): Սփյուռքաիայի համար` սա հեզվական ծաղրական իմաստ ունի (թխսից` ձվից նոր դուրս եկած, այսինքն` անսիրոճ): Պետք է ասել. Նորանշանակ, նորընծա: «Կառավարությունը Աժ-ի քննարկմանը ներկայացրեց հավակնոտ ծրագիր…»: Անոթ է: Հավակնոտ նշանակում է մեծամիտ, ամբարտաւան, փառամոլ: Ավելի ընդունելի

է ասել. «համարձակ ծրագիր»: Բանախոսը այն մարդն է, որին Նախօրոք հանձնարարված է ինչ որ կոնկրետ մի հարցի շուրջ գեկուցումով հանդես գալ հանրության առջև: Իսկ մեզ մոտ բանախոս են անվանում ինչ որ ատվիսի, որևէ հարցի քննարկման մասնակցին, որը ելույթ է ունենում: Վերջին տարիներին շրջանառությունից դուրս է «չարտվել» գեկուցումը. այն փոխարինվել է «զեկույց» բառով: Այս բառերը միանգամայն տարբեր բովանդակություն ունեն. չի կարելի շփոթել: Ջեկուցումն ըստ էության ավելի ընդգրկուն, գիտականորեն փաստարկված, համեմատաբար ընդարձակ ելույթ է: Իսկ «զեկույցը» կարճ հաղորդում է ինչ-որ մի հարցի մասին ներկաներին իրազեկ պահելու համար:

Մինչեւ վերջին տարիները որջ հայությունը օգտագործում էր «ներումծել» բառը` ինչ որ մի ապրանք արտասահմանից Հայաստանի սահման անցկացնելու համար: Անտասկանալի պատճառով հրաժարվեցինք այդ բառից այն փոխարինելով «ներկրել» բառով: Բայց տեղափոխել չի նշանակում անպայման երկրի սահմանից ներս բերել: Ուշադրություն դարձրեք հետևյալ արտահայտության վրա. «Իրանական գազը խողովակաշարով Հայաստան ներկրել»:

Հայության երկու հատվածներն էլ օգտագործում են ուտելիք բառը: Դա այն է, որ տվյալ պահին կարելի է ուտել: Չզիտես ինչ պատճառով Հայաստանում գործնականում շրջանառությունից այդ բառը լրիվ դուրս մղվեց և փոխարինվեց ուտեստով: Միշտ չէ որ ուտեստը ուտելիք է : Օրինակ, ուտեստեղեններ են հոււմ ձուկը, միսը, կարտոֆիլը, բայց տվյալ պահին ուտելիք չեն: Ինչո՞ւ ենք մեր լեզուն աղքատացնում:

Ներխուժել բառն օգտագործվում է լրիվ աղավաղված իմաստով «ներս մտնելու» փոխարեն: «Ներխուժում է» գայրացած, անկիրթ ամբոխը: Մարդկանց հանգիստ

մուտքը մի որևէ հավաքատեղի «ներխուժում» չի կարելի որակել:

Երբ դերասանը կամ ասմնըողը ունկնդիրներին բանաստեղծություն կամ գրականական մի մասունք է մատուցում արևմտահայն ասում է արտասանում է, իսկ Հայաստանում` կարդում է (Նորից ռուսերենից վերցված. чИТАЕТ): Կարդում են աչքի առաջ եղած գրվածքը, իսկ անգիր ասելը` արտասանել է: Ունենք եւս մի գեղեցիկ համարժեք բառ. ասմունքել: Ինչո՞ւ ենք հրաժարվում մեր ունեցած հարազատ բառերից եւ դրանք փոխարինում մեզ համար խորթ օտար բառերով: Պատժի արժանանալ: Մարդը արժանանում է լավ բանի. մրցանակի, գովասանքի ոչ թե պատժի: Վատ արարքի համար մարդը պատժվում է:

«Երդում ուտել» երդումը ոչ հայ է, ոչ էլ խորոված, որպեսզի «ուտվի»: Մարդը` զինվորները, բժիշկները երդվում են:

Հնչեցնել. այդ որ օրվանից հայաստանաբնակ հայը դարձել է զանգ, երաժշտական գործիք (երբեմն նաեւ «դատարկ տակառ»), որ իր միտքը խոսքով ասելու (խոսելու) փոխարեն հնչեցնում է: Կարելի է ահազանգ հնչեցնել, ինչպիսին մեր այս հոդվածն է: Ունենք մի գեղեցիկ բառ. բարձրաձայնել: Ինչու է այդ բառը հազվադեպ օգտագործվում:

Սոցիալական արժեքները մեր ընտանիքում կարող են լինել արժեքներ, որոնք չեն հարմարվում ժամանակի պահանջներին: Սոցիալական արժեքները կարող են լինել արժեքներ, որոնք չեն հարմարվում ժամանակի պահանջներին: Սոցիալական արժեքները կարող են լինել արժեքներ, որոնք չեն հարմարվում ժամանակի պահանջներին:

Նորայր ԲԵՅԼԵՐՅԱՆ քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր. ԸԸ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ շարունակությունը կարդացեք ‘ՀԱՍԿԻ’ հաջորդ համարներում

Միասնական որոշակի բազա:
• Գեոպորտալը լինի բաց, որպեսզի քաղաքացիները հատակազձում կարողանան տեսնել իրենց պատկանող հողամասը, եւ սխալների առկայության դեպքում դիմել համապատասխան ստորաբաժանմանը: Եթե այդ հարցումների ստուգման արդյունքում պարզվի, որ իսկապես առկա են սխալներ, կուղղվի:
• Կարելի է նաեւ յուրաքանչյուր առքուվաճառքից առաջ նույնպես (ինչպես որ էստոնիայում է) իրականացնել ստուգում եւ միայն դրանից հետո անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման նոր վկայական տրամադրել:

Միասնական որոշակի բազա:
• Գեոպորտալը լինի բաց, որպեսզի քաղաքացիները հատակազձում կարողանան տեսնել իրենց պատկանող հողամասը, եւ սխալների առկայության դեպքում դիմել համապատասխան ստորաբաժանմանը: Եթե այդ հարցումների ստուգման արդյունքում պարզվի, որ իսկապես առկա են սխալներ, կուղղվի:
• Կարելի է նաեւ յուրաքանչյուր առքուվաճառքից առաջ նույնպես (ինչպես որ էստոնիայում է) իրականացնել ստուգում եւ միայն դրանից հետո անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման նոր վկայական տրամադրել:

Հաշվառման և հողաշինարարության վարչության գլխավոր մասնագետ՝ Ն. Խոտպվերոյան

ՀԱՍԿ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՆԱԿԸ ԵՒ...ԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մի առիթով պրովետարիատի առաջնորդ Լենինն ասել է. -Գրքի գողը գող չէ: Դժվար չէ կռահելը, որ այրպիսով նա ցանկանում էր ընդգծել գրքի կարեւորությունը: Հայտնի է, որ շատ գրողներ դեռ մանուկ հասակից եղել են անհագ ընթերցողներ եւ շանացել են ամեն կերպ ունենալ գրքեր... Սեւակը հիշում է դպրոցական տարիները, երբ ոչ թուղթ կար, ոչ` մատիտ: Հաճախ ամբողջ դասարանով պարապում էին մեկ դասագրքով: Ուսուցիչները միջնակարգ եւ տարրական կրթություն ունեին: Իսկ ֆիզկուլտուրայի ուսուցիչը երեխաներին դասավանդում էր նաեւ գրականություն: Եւ հետաքրքրական է այն, որ այդ հարցում նրան օգնում էր ինքը՝ Սեւակը: Հավկաթբար, հենց այդ տարիներին էլ բանաստեղծը զգացել է քաղոց դեպի գրքերը: Ամեն գիշեր նա գրում էր հաջորդ օրվա անցնելիք հեղինակի կյանքն ու գործունեությունը, որը հետո փոխանցում էր գրականության ուսուցչին, ով նույն օր թելադրում էր աշակերտներին: Գրում էր նաեւ Սեւակը: Նա նաեւ

հիշատակում է իր մանկության ընկերներին, որոնց հետ գյուղից գյուղ էր գնում մարդականցից գիրք խնրելու նպատակով: Ջարմանալի է, բայց գողություն էլ են կատարել. երեք չորս հոգով կտրելով շրջակա երեք չորս գյուղերի դպրոցական գրադարանները: Ավարի մեծ մասը բաժին էր հասնում Սեւակին: Նա կարդում էր մեծ հետաքրքրությամբ այդ թվում նաեւ արգելված գրականություն: Այդպես նա հետագայում արտագրեց արգելված Բաֆֆու բզկտված վեպի մի մասը, կոնսպեկտավորեց Դարվինի տեսակների ծագումը եւ այլն: Նույնիսկ երագում էր բանաստեղծը տեսնում գրքեր, այն էլ պատկերազարդ, քարտեզավոր: Այդ ժամանակ արգելված էին նաեւ Չարենցի ստեղծագործությունները եւ ինչպես բանաստեղծն է Նշում իր հարցազրույցներից մեկի ժամանակ, պատանի հասակում շատ է տխրել, երբ իմացել է, որ Չարենցի գրքերը հանելու են գրադարանից: Հետագայում նա գողանում է Գիրք ճանապարհի՝ ժողովածուի մեկ օրինակ եւ ամբողջ

գիշերը անցկացնում է այն ընթերցելով: Համալսարնում դարձյալ հույժ գաղտնի շարունակում է ընթերցել Չարենցի ստեղծագործությունները եւ օրերից մի օր հասկանում է, որ այն մարդիկ, ում նա բանաստեղծ էր համարել, բնավ էլ բանաստեղծ չէին այդ թվում` Եղիշե Չարենցը: Դրանից հետո Սեւակը երկու տարի շարունակ բանաստեղծություն չի գրում եւ զբաղվում է բանասիրությամբ: Այնուամենայնիվ, օրերից մի օր սկսում է գրել եւ նկատում է, որ այս անգամ իր բանաստեղծությունները բոլորովին ուրիշ որակի են. `Երեւի Չարենցն էր ինձ սպանել, հետո հարություն տալու թաքուն մտադրությամբ՝, -ասել է Պարույր Սեւակը:

Արման Շիրվանեցի
մագիստրատուրա հեռակա \$4 1 կուրս



Հայրը հարցնում է Սիլվիկին.
-Մանկապարտեզում լա՞վ է, ընկերներ ունե՞ս:
-Այո, ընկեր Արմիկը:
* * *

Հայաստանի դրոշ էր տեսել: Դրա շուրջ թեթև զրույցից հետո ասում եմ.
-Կարո՞ղ ես ասել «Ես հայ եմ»:
-Չէ:
-Ինչո՞ւ:
-Ես Սիլվիկն եմ:))
* * *

Մանկապարտեզում մորաքույրն ասել է. <Երեխաներ, հիմա ես վաֆլի ու կոնֆետ կբերեմ>:
Սիլվիկն էլ ուրախացած՝ ՈՒ սո՛ւրճ կխմե՛նք...՝
* * *

Սիլվիկը «Նապաստակ»-ն է երգում:
Ասում է. «Ուտում գազար ու կեղեւ, կրծում ՄՍՏՆԵ՛Ր»։
* * *

Սիլվիկին ասում եմ. 'Հորաքույրը ատամնաբույժ է, եթե ատամիկդ ցավի, կզնանք իր մոտ ու ցավը կանցնի':
Մտւմ, ժտւմ ու խորամանկ ժպիտով ասում է. 'Ատամս ցավում է... հոգուլի մոտ գնանք...'

ՀԱՍԿ-Լուսինե Ամիրխանյանը ավարտել է մեր բուհը, հիմա նաեւ աշխատում է այստեղ: Նա ուշադրությամբ, մեկիկ-մեկիկ հավաքում է իր 2,5 ամյա դստրիկի 'մարգարիտ' մտքերը:

ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԹԱԳՈՒՅԻՆ

Սիլվա Կապուտիկյանը ծնվել է 1919 թվականի հուլիսի 20-ին Վանից գաղթած դաշնակցական ազգային գործիչ Բարունակի ընտանիքում: 13 տարեկանում գրում է իր առաջին բանաստեղծությունը: Սակայն տարիներ հետո բանաստեղծուհին խոստովանում է, թե իր գրական գործունեության սկիզբ համարում է 1935 թ. մարտի 10-ը, երբ „Գրական թերթում,, տպագրվել է „Հասունություն,, բանաստեղծությունը: 1936-1941թթ. սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում: 1950-ին մասնակցել է Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացներին: 1945 թվականին լույս է տեսել բանաստեղծությունների առաջին ժողովածուն: 1952-ին „Իմ հարազատները,, ժողովածուի համար ստացել է ԽՍՀՄ պետական մրցանակ: 1970 թվականին արժանացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի, 1980-ին՝ Վրաստանի մշակույթի վաստակավոր աշխատողի կոչումների: 1989 թվականին ստացել է Նոսիդեի անվան միջազգային մրցանակ (Հռոմ, Իտալիա):

Սիլվա Կապուտիկյանը գրել է նաեւ մանկական բանաստեղծություններ: Կապուտիկյանը այցելել է Եգիպտոս, Ֆրանսիա, Ուրուգվայ, Իտալիա, Կիպրոս, ուսումնասիրել է հայկական գաղթավայրերի կենցաղը, խնդիրները: Հետագայում իր հուշերը բանաստեղծուհին ամփոփել է „Քարավանները դեռ քայլում են,, „Գույներ Նույն խճանկարից,, „Քարավանները հեռանում են,, ուղեգրություններում: Հանդես է եկել նաեւ հրապարակախոսական հոդվածներով, որոնք տպագրվել են „Իմ ժամանակը,, „Չեմ կարող լռել,, եւ „Վերջին զանգ,, գրքերում: Կապուտիկյանը հավատում էր հայկական զարթոնքին. „Հավատացեք, կգա այն օրը, երբ համայն հայ ժողովուրդը կհավաքվի Մայր հայրենիքում, կհավաքվի առավել թափով ու խանդավառ կառուցելու եւ ստեղծելու ավելի խաղաղված սրտով, լայնասիրտ ու լիաձայն ասելու իր խոսքը համաշխարհային մշակույթի բազմալեզու լսարանում, ավելի լիաբուռն ի հայտ բերելու իր ձիրքերն ու կարողությունները՝ ժողովուրդների

բարեկամության, սիրո եւ հավատարմության սկզբունքների վրա բարձրացող, հանուր մարդկության երջանկությունը հետապնդող գալիք արդար ժամանակներում:

Հայ ժողովուրդը ապրել է, հայ ժողովուրդը ապրում է, հայ ժողովուրդը պիտի ապրի,,:

Սիլվա Կապուտիկյանը մահացել է 2006 թ օգոստոսի 26, աճյունը ամփոփված է Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնում: 2009 թվականին բացվել է նրա տուն թանգարանը: Բանաստեղծուհու պատգամի համաձայն տուն թանգարանում ոչինչ չի տեղաարժվել ամեն ինչ գտնվում է նույն տեղում, ինչպես եղել նրա կենդանության օրոք:

Արման ՇԻՐՎԱՆԵՑԻ
մագիստրատուրա, 1-ին կուրս

ՄՈՒՍԱԼԵՌ

ՍԵԼԻՆՋԵՐ ԱՆՈՒՆՈՎ ԱՌԵՂԾՎԱԾԸ


Սիլվա Կապուտիկյանը ծնվել է 1919 թվականի հուլիսի 20-ին Վանից գաղթած դաշնակցական ազգային գործիչ Բարունակի ընտանիքում: 13 տարեկանում գրում է իր առաջին բանաստեղծությունը: Սակայն տարիներ հետո բանաստեղծուհին խոստովանում է, թե իր գրական գործունեության սկիզբ համարում է 1935 թ. մարտի 10-ը, երբ „Գրական թերթում,, տպագրվել է „Հասունություն,, բանաստեղծությունը: 1936-1941թթ. սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում: 1950-ին մասնակցել է Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացներին: 1945 թվականին լույս է տեսել բանաստեղծությունների առաջին ժողովածուն: 1952-ին „Իմ հարազատները,, ժողովածուի համար ստացել է ԽՍՀՄ պետական մրցանակ: 1970 թվականին արժանացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի, 1980-ին՝ Վրաստանի մշակույթի վաստակավոր աշխատողի կոչումների: 1989 թվականին ստացել է Նոսիդեի անվան միջազգային մրցանակ (Հռոմ, Իտալիա):

Սիլվա Կապուտիկյանը գրել է նաեւ մանկական բանաստեղծություններ: Կապուտիկյանը այցելել է Եգիպտոս, Ֆրանսիա, Ուրուգվայ, Իտալիա, Կիպրոս, ուսումնասիրել է հայկական գաղթավայրերի կենցաղը, խնդիրները: Հետագայում իր հուշերը բանաստեղծուհին ամփոփել է „Քարավանները դեռ քայլում են,, „Գույներ Նույն խճանկարից,, „Քարավանները հեռանում են,, ուղեգրություններում: Հանդես է եկել նաեւ հրապարակախոսական հոդվածներով, որոնք տպագրվել են „Իմ ժամանակը,, „Չեմ կարող լռել,, եւ „Վերջին զանգ,, գրքերում: Կապուտիկյանը հավատում էր հայկական զարթոնքին. „Հավատացեք, կգա այն օրը, երբ համայն հայ ժողովուրդը կհավաքվի Մայր հայրենիքում, կհավաքվի առավել թափով ու խանդավառ կառուցելու եւ ստեղծելու ավելի խաղաղված սրտով, լայնասիրտ ու լիաձայն ասելու իր խոսքը համաշխարհային մշակույթի բազմալեզու լսարանում, ավելի լիաբուռն ի հայտ բերելու իր ձիրքերն ու կարողությունները՝ ժողովուրդների բարեկամության, սիրո եւ հավատարմության սկզբունքների վրա բարձրացող, հանուր մարդկության երջանկությունը հետապնդող գալիք արդար ժամանակներում:

Հայ ժողովուրդը ապրել է, հայ ժողովուրդը ապրում է, հայ ժողովուրդը պիտի ապրի,,:

Սիլվա Կապուտիկյանը մահացել է 2006 թ օգոստոսի 26, աճյունը ամփոփված է Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնում: 2009 թվականին բացվել է նրա տուն թանգարանը: Բանաստեղծուհու պատգամի համաձայն տուն թանգարանում ոչինչ չի տեղաարժվել ամեն ինչ գտնվում է նույն տեղում, ինչպես եղել նրա կենդանության օրոք:

Արման ՇԻՐՎԱՆԵՑԻ
Մագիստրատուրա
ՖԿ 1 կուրս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ**

**1-2
2019**

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հիմնադրամ, հասցե՝ Տերյան 74 պետոեգիստրի վկայական՝ 273.210.03231, տրված 10.06.2002 թ.

գրանցված է ՀՀ ԱՆ, վկայական 01Մ000153
Խմբագրության հասցեն՝ ՀԱԱՀ, 1-ին մասնաշենք, 4-րդ հարկ e-mail: a_khudaverdyan@mail.ru

խմբագիր, համարի պատասխանատու եւ ձեւավորող՝
ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ